Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ

Խոշորացված համայնքներում կառավարման ապակենտրոնացման խորհրդատուի ընտրություն

Ժամկետ՝ 3 ամիս

Ծրագրի մասին: ԱՄՆ ՄԶԳ Տեղական ինքնակառավարման բարեփոխումներին ուղղված գործունեությունը կոչված է օժանդակելու ՀՀ-ում տարածքային կառավարման բարեփոխումներին՝ պիլոտային ծրագրերի համար տրամադրելով 8,6 միլիոն դոլար 13 միավորված համայնքներին: Այս գործունեությունը նպատակ է հետապնդում համայնքների միավորման գործընթացում սատարել հանրային ծառայությունների բարելավման, համայնքային ենթակառուցվածքների արդիականացման և համայնքային կարողությունների աճին: ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՏԻՄ բարեփոխումներին» ծրագիրն իրականացնում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը:

Ծառայության նկարագիրը

ՏԻՄ բարեփոխումների և ապակենտրոնացման խորհրդատուն (այսուհետև՝ խորհրդատու) ԱՄՆ ՄԶԳ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ընտրված պիլոտային մարզի համար պետք է մշակի ապակենտրոնացման գործընթացի մոդել, որն արտացոլում է առնվազն հետևյալ ոլորտները.

- Մեկ կամ մի քանի վարչական լիազորությունների ապակենտրոնացում պիլոտային մարզում
- Գոյացած նոր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերահաշվարկ

Խորհրդատուի պարտականությունները ներառում են.

- Ապակենտրոնացման միջազգային մոդելների ուսումնասիրություն և ՀՀ պիլոտային մարզում հավելյալ լիազորություններ առաջարկելու նպատակով հայցեկարգի մշակում;
- ՀՀ-ում ապակենտրոնացման ներկա մակարդակի ուսումնասիրություն և բնորոշում. բացերի և քայլերի հաջորդականության նկարագրություն;

- Կենտրոնական կառավարության (մարզային մակարդակի) գործառույթային լիազորությունների ապակենտրոնացման վերաբերյալ առաջարկությունների մշակում;
- Առաջարկվող նոր լիազորությունների ազդեցության գնահատումը տեղական ծառայությունների որակի վրա:

Խորհրդատուի պահանջվող որակավորումները

- ✓ Առնվազն մագիստրոսի կրթական աստիճան հանրային կառավարման բնագավառում, հանրային կառավարման գծով հետբուհական կրթության առկայությունը խրախուսվում է (համապատասխան դիպլոմները, վկայականները, սերտիֆիկատները կցել):
- ✓ Հետազոտությունների և հրապարակումների առկայություն սոցիալական գիտության նշված բնագավառում, ինչպիսիք են տնտեսագիտությունը, պետական կառավարումը և ֆինանսները
- ✓ Առնվազն 4 տարվա աշխատանքային փորձ հանրային կառավարման կամ համայնքային զարգացման ոլորտում, որից 2 տարին՝ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններում:
- ✓ Միջազգային կազմակերպություններում աշխատանքային փորձը կդիտարկվի որպես առավելություն:
- ✓ Անգլերեն լեզվի իմացությունը պարտադիր է:

Համայնքների զարգացման ծրագրերի գծով խորհրդատուի պահանջվող չափանիշներին բավարարող թեկնածուները պետք է ներկայացնեն իրենց համառոտ ինքնակենսագրականը (CV) անգլերեն և հայերեն տարբերակով, ինչպես նաև կրթությունը և աշխատանքային փորձը հաստատող փաստաթղթերը մինչև **2020 թվականի ապրիլի 28-ը ժամը 17:00-ն**, հետևյալ էլ. փոստի հասցեներին՝ atdf@atdf.am, procurement@atdf.am:

Միայն կարճ ցուցակում ընդգրկված անձիք կհրավիրվեն հարցազրույցի: